Ֆրանկաց միջոցով տեղի կունենար Թուրքիայի հին վաճառականութիւնը Պարսկաց հետ՝ գէթ այն մասը, որ կըլլար Եւրոպայի՝ մանաւանդ Անգլիայի՝ արտադրութեանց վրայ, և անշուշտ Ալիոններ, Բալիներ, Սաէֆանովիչներ արդէն ըրած էին մեծ գործառնութիւններ Դաւրէժի հետ երբ Դարակէօզեանք, Յակոբեանք, Ֆրնտրքլեանք և այլք Կ. Պոլիսի հրապարակին վրայ նոր կըսկսէին խլըրտիլ։ Ասոնցմէ առաջ և Բիւզանդիայէն դուրս՝ կերեւի թէ Կարինի, Ջուղայի, Տրապիզոնի, Վանի, Կեսարիայի և ուրիշ կենդրոն քաղաքներու մէջ կային ջոջ Հայեր, որ կըզբաղէին պարսկական վաճառականութեամբ ալ։

Ի սկզբանէ խստամբեր, չարքաշ, սակաւապէտ եւ խորագէտ աշխատողներ՝ Պարսիկները ցոյց տուած են կարեւոր գործունէութիւն Արեւելքի ասիական վաճառականութեա՛ն ալ մէջ, ու իրենց խարական խիստ ոգին ներած չըլլալով իրենց՝ մինչեւ ցայսօր իսկ՝ ուղղակի յարաբերութիւններ հաստատել Եւրոպայի հետ՝ յոյն, իտալացի, Ֆրանսացի ու ետքն ետքն հայ վաճառականներու միջոցով բերել տուած են իրենց կարեւորներն արեւմտեան երկիրներէն։ Այն ապառիկներու միշտ ձգտում ունեցող այս պարսիկ տարրը՝ վաղուց հաստատուած Կ. Պոլիսի և Սկիւտարի կենդրոն վաճառանոցները՝ 19դ դարուն մէջ մանաւանդ սկսած է ընել Կ. Պոլիսի միջոցով մեծ գործառնութիւններ ու փոխանակութիւններ, և Վալիտէ խանի ցից զառիվերն ընծայած է յաճախ ասիական ներդաշնակ պէսպիսութիւն մը՝ Կ. Պոլիսի արեւելեան հին տարազներուն հետ՝ պարսիկ աշտարակեալ գլխանոցներու և մոմիկ պարզ հանդերձներու լուրջ և ժիր երթեւեկներով։

Պարսկական տուրեւառներու նշանակելի յարաբե-